Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի «Ծաղկահովիտ բնակավայրի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ՝ տնօրենի ուսումնական գծով տեղակալի /մեթոդիստի / թափուր պաշտոնի համար

1. ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ «ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ-Ի ՄԵԹՈԴԻՍՏԸ

Աշխատանքային լիազորություններ և պարտականությունները՝

Կազմակերպում է ուսումնական հաստատության մեթոդական աշխատանքը, վերլուծում ուսումնական հաստատության ուսումնական և դաստիարակչական աշխատանքները.

1) մասնակցում է հաստատության աշխատանքային պլանի մշակմանը, ռազմավարության պլանավորմանն ու ներդրմանը, կրթական ծրագրերի ընտրությանը.

2) Կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից հաստատված կրթական ծրագրերին համապատասխան պլանավորում է ուսումնադաստիարակչական, մեթոդական աշխատանքները հաստատությունում՝ հաշվի առնելով մանկավարժական աշխատողների կարողությունները.

3) անցկացնում է մեթոդժամեր, սեմինարներ, անհատական և խմբային խորհրդատվություններ, բաց պարապմունքներ.

4) կազմակերպում է ուսումնամեթոդական փաստաթղթերի, ձեռնարկների, դիդակտիկ նյութերի և սարքավորումների համակարգման աշխատանքները.

5) կազմակերպում և համակարգում է հաստատությունում սանի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման գործընթացը.

6) պլանավորում և դաստիարակների հետ կազմակերպում է ուսումնադիտողական պարագաների, դիդակտիկ նյութերի պատրաստման աշխատանքները.

ապահովում է հաստատությունում փորձարարական, հետազոտական աշխատանքների բովանդակային կազմակերպումը.

7) վերլուծում և ընդհանրացնում է ուսումնական հաստատության փորձարարական աշխատանքների արդյունքները, միջոցներ է ձեռնարկում մանկավարժական աշխատողների արդյունավետ փորձը տարածելու համար.

8) համակարգում է հաստատություն-ծնողական համայնք համագործակցությունը.

9) իրականացնում է դաստիարակների աշխատանքի նկատմամբ վերահսկողություն. դիտարկում է՝

ա. ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանները.

բ. կանոնակարգային բոլոր պահերը՝ բոլոր տարիքային խմբերում.

գ. մեթոդական աշխատանքի բովանդակությունը. նախապատրաստումը, ծրագրավորումը, պլանավորումը, կազմակերպումն ու կարգավորումը, խթանումը, վերլուծությունը:

2. Նշված պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է՝

ա) բարձրագույն մանկավարժական կրթություն,

բ) վերջին տասը տարվա ընթացքում նախադպրոցական կրթության ոլորտի աշխատանքի առնվազն երեք տարվա մանկավարժական գործունեության ստաժ:

գ) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

դ) իր պարտականությունների կատարման համար անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն որոնք վերաբերում են կրթության բնագավառին, (Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, «Կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Նախադպրոցական կրթության մասի», «Լեզվի մասին», «Երեխայի իրավունքների մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Լիցենզավորման մասին», «Տեսչական մարմինների մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքները, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգիրքը, «Նախադպրոցական ուսումնական հաստատության օրինակելի կանոնադրությունը», Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը, կրթության պետական կառավարման լիազորված մարմնի համապատասխան նորմատիվ իրավական ակտերը.) ,

ե) մանկավարժության, հոգեբանության, ֆիզիոլոգիայի, հիգիենայի հիմունքները, ուսումնամեթոդական փաստաթղթերի վարման սկզբունքներին:

3. Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը, ով՝

1) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

2) դատական կարգով զրկվել է մանկավարժական գործունեությամբ զբաղվելու իրավունքից.

3) տառապում է ՀՀ կառավարության կողմից հաստատված այնպիսի հիվանդությամբ, որը կարող է խոչընդոտել մանկավարժական գործունեության իրականացմանը.

4) դատապարտվել է հանցագործության համար, և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ, բացառությամբ այն դեպքերի, երբ դատապարտվել է ոչ դիտավորյալ հանցագործություն կատարելու համար:

4. Դիմող ՀՀ քաղաքացիները մրցույթին մասնակցելու համար պետք է «Ծաղկահովիտ բնակավայրի մանկապարտեզ » ՀՈԱԿ ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

1) դիմում (Ձև 1).

2) կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ).

3) անձը հաստատող փաստաթուղթ.

4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ (առկայության դեպքում).

5) ինքնակենսագրություն (Ձև 4).

6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի.

7) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ.

8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ կամ զինվորական կցագրման վկայական.

9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

5. Թափուր պաշտոնի համար սահմանված **դրույքը – 0,75** պաշտոնային դրույքաչափը՝ (ներառյալ հարկերը և տուրքերը) **120.000** /մեկ հարյուր քսան հազար/ ՀՀ դրամ

Մրցույթը կկայանա **2026 թվականի փետրվարի 26-ին, ժամը 10:00-ին,** «Ծաղկահովիտ բնակավայրի մանկապարտեզ» ՀՈԱԿ –ում, հասցեն՝ գ.Ծաղկահովիտ Շիրակացի փողոց շ. 12/1

Դիմումների ընդունման վերջին ժամկետը **2026 թվականի փետրվարի 18-ն է,** ամեն օր ժամը 9:00-17:00, բացի շաբաթ և կիրակի օրերից : Մրցույթն անցկացվելու է երկու փուլով՝ **թեստավորման և հարցազրույցի: Հարցաշարը հաստատված է ՀՀ կրթության, գիտության,մշակույթի և սպորտի նախարարի 22.10.2024 թվականի N 1981-Ա/2 հրամանով:**

Այլ տեղեկությունների համար դիմել «Ծաղկահովիտ բնակավայրի մանկապարտեզ» ՀՈԱԿ (հեռ.՝ 094 79-31-93) կամ համայնքապետարանի մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի, սոցիալական աջակցության բաժին (հեռ. 094 16-68-66):

ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ « ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ » ՀՈԱԿ